



ՆՈՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՆՐԵՍ  
Հատոր 2, համար 1, 2008թ.



www.ysmu.am

ՍԱՂՄՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՉԱՐՈՐԱԿ ԱՃ  
ՀԻՄՆԱԽՆԳԻՐՆԵՐՆ ՈՒ ՀԱԿԱՌՈՒՌՈՒՅՋԱՅԻՆ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԻ  
ՍՏԵՂԾՈՒՄԸ

Սկրտչյան Լ. Մ.

«Դ-Ո» Ռուս-հայկական բժշկական կենտրոն  
Երևանի Մ. Հերացու անվ. պետական բժշկական համալսարան

**Ամփոփում**

Սաղմնային բջջային ստիգմատները, որոնք մնացել են ծնվելուց հետո, ուռուցքային փոխակերպման ընթացքում նոր հիստոբլաստիկ պոտենցիաներ ձեռք չեն բերում, այլ միայն կորցնում են նրանց ի հայտ գալու ունակությունը: Սաղմնաբանությունը հանդիսանում է չարորակ վերածնման առավել արմատական տարբերակիչ գիծը ըստ՝ նյութափոխանակության, էներգետիկ, կառուցվածքային և այլ հատկանիշների: Ներարգանդային զարգացման ժամանակից «մոլորված» բջջային կոմպլեքսներն (բջիջների կոմպլեքսները հենց «կենդանի ֆիզիկայի» դիրքորոշմամբ կարող են ստեղծել ամուր շաղկապված կապեր) որոշակի պայմաններում կարող են տարբեր տարիքային փուլերում դառնալ նորագոյացության աճի գլխավոր աղբյուր: Որպեսզի առաջին չարորակ բջիջները ոչ միայն ծնվեն, այլև գոյատևեն, առավել ևս անկառավարելի բազմանան, նրանց անհրաժեշտ է հարմարվել իմունիտետի «հարձակվող» գործոններին: Ըստ մեր տվյալների, գոյություն ունեն պաշտպանության երկու փուլ՝ մալիգնիզացող բջիջների պատումը սաղմնային սպիտակուցներով և նրանց պատումը ֆիբրինային վահանով: Էքսպրեսսացիայի ենթարկելով նորմալ սաղմնային սպիտակուցները, չարորակ բջիջները նմանակում են զարգացող պտղին, որի նկատմամբ կենդանի օրգանիզմը հաստատում է առավելագույն իմունային բարենպաստություն: Ըստ էության, վտանգավոր ուռուցքային բջիջը գոյատևելու համար օգտագործում է կենսաբանական տեսակի «սրբերի սուրբ» պտղի պաշտպանության պարտավորությունը: Պաշտպանության երկրորդ փուլը՝ դա տրոմբոպլաստիկ սուբստանցիաների վերարտադրողականությունն է, որի արդյունքում, ֆիբրինով պատված բջիջները հակակոողմնորոշում են իմունային պատասխանը, դուրս գալիս իմունիտետի հսկողությունից, առաջացնելով իմունային տոլերանտություն: Թաղանթային մոլեկուլյար ընկալիչների պոլիկլոնալության, մոզահիկության հետևանքով կոշտ ուռուցքների ձևերի մեծամասնության դեպքում թիրախային դեղամիջոցային բուժումը իր նպատակին չի հասնում: Պարզ է, որ ռիսկի առավել բարձր հավանականության խմբերում իմունոլերականգնողականության միջոցները (գործնականորեն առողջ մարդկանց մոտ) պետք է լինեն լիովին անվնաս և առավելագույն արդյունավետ: Մեր պատկերացմամբ, քաղցկեղի դեմ պայքարում ամենահեռանկարային ուղղություններից մեկն օնկոլոգիական բարձր ռիսկի խմբին պատկանող մարդկանց նորմալ սաղմնային սպիտակուցների լայն սպեկտրով կանխարգելումն է, որի հետ հասուն և տարեց մարդիկ չեն առնչվում տասնամյակների ընթացքում:

Դա մեզ հնարավորություն կտա վերականգնել մարդկանց թուլացած բնական հակաուռուցքային կայունությունը մոնոնուկլեար-մակրոֆագալ համակարգի սենսիբիլիզացիայի միջոցով մշտապես առաջացող մուտանտային բջջային ձևերի հանդեպ՝ արդեն իսկ ուռուցքային աճի զարգացման փուլում:

*Հանգուցային բառեր.* չարորակ աճ, իմունային պատասխան, պատվաստաթերապիա: